

լումք որ խաչեցար : Ձի Նեստորիոս յուրաստ
 յաստուածութենէն Քրիստոսի լեալ հայհոյէր ,
 եթէ որ ի խաչն բեւեռեցաւ մարդ սոսկ էր եւ
 ոչ Աստուած ճշմարիտ : Այլ մեք դաւանիմք
 ի Քրիստոս զԱստուած ճշմարիտ եւ զմարդ
 ճշմարիտ , աստուածութեամբն անշարժարելի
 եւ ըստ մարդկութեանն չարժարելի . չարչա-
 րեցաւ ի մարմնի զոր զգեցաւն եւ ոչ յայլում
 իմիք , որպէս Նեստոր եւ Պետրոս համբաւեն
 զՔրիստոսէ , եթէ մարդ լոկ իցէ : Իսկ մեք
 հաւատամք , եթէ մարդոյ լոկոյ չէ հնար զաչ-
 խարհ փրկել եւ ոչ Աստուծոյ միայնոյ զմահ
 մեռանել : Վասն սորին իսկ այսորիկ խոստո-
 վանիմք որ խաչեցար , զի յամօթ արասցուք
 զայնոսիկ , որ միանգամ յաստուածութենէն
 յուրաստ կայցեն : Ի մէջ այսպիսեաց հարկ ի
 վերայ կայ մեր կեալ եւ ընդ նոսին հանապազ
 ի կազ եւ ի կռիւ գալ :

Իսկ ժողովոյն Քաղկեդոնի չյօժարիմք
 տալ զձեռնագիր մեր , զի շատ իսկ համարիմք
 զսահմանսն առաջին երից ժողովոցն զուսա-
 րելոց յանուն ամենասուրբ Երրորդութեանն
 Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ , որք վասն
 ուղղափառ հաւատոցն կարգեալ աւանդեցան ,
 այս ինքն զսուրբ Երրորդութենէն եւ զմար-
 մնաւորութենէն Բանին Աստուծոյ ճառեցան :
 Զայլ ամենայն ժողովսն՝ որ նախ քան զմեզն
 կացին չհամարեցան ինչ կարեւոր , նմին իրի
 իսկ եւ ժողովոյն Քաղկեդոնի չգտան առաջի-
 կայ : Այլ սակայն մեք զայն ամենայն ժողովս
 տիեզերականս , յորս կարգեցան սահմանք ինչ